

զղիակունսդ, որպէս զի գիշատեալք ի թռչնոց՝ ընկեսցի այսր անդր ոսկրոտին, ի գլուխ լերանց եւ կամ ի խորածոր¹ տեղիս քարանձաւաց, մինչեւ եկեալ անցցէ ի բաց կարաւանն արթունի. գուցէ, ասէ, ²եկեալ ոք ի քրիստոնէիցն, իրազգած յումեքէ եղեալ՝ գտանիցէ զոսկերս դոցա եւ առեալ սփռիցէ յամենայն քրիստոնեայս, եւ մեք գտանիմք մահապարտք առաջի թագաւորին»:

13 Եւ մնացեալ անդ պահապանացն ըստ հրամանին Դենշապիոյ³ եւ Մովսն անդերծապետի⁴ եւ Ջնիկանայ մայպետի, եւ կացեալք զայն աւուրս՝ խորհէր ի միտս իւր երանելի Խուժիկն, եթէ զինչպիսի հնարիւք ցուցանիցէ Աստուած ճանապարհ առնն, որով արժանի լիցի գողանալոյ զնշխարս սրբոցն յայլոց պահապանացն: 14 Եւ մինչդեռ երանելի այրն յայնպիսի⁵ խոհականութեան վտանգի կայր՝ յանկարծակի ի նմին աւուր յերեկորեայ գիշերոյն լինէր շարժումն մեծ ի տեղւոջն. բոմբիւնք սաստիկք եւ ձայնք ահագինք յանդնդոց հնչէին. կուտեալք բազմութիւնք ամպոց զերկիրն ծածկէին. ձայնք որոտմանց եւ փայլատակունք զլերինս դողացուցանէին: 15 Եւ սին լուսոյ ըստ աւրինակի ծիածանի իջեալ յերկնից՝ շուրջ պարուրեալ զնահատակաց զմարմինս ծրափակէր: 16 Եւ կործանեալ յերկիր պահապանքն՝ կիսամեռք լինէին, չգիտելով այր զընկեր բնաւ արդեալք թէ ո՞ր իցէ. որք եւ զլորեալք յերկիր՝ ոչ կարէին կալ հաստատուն. քանզի դողումն մեծի շարժմանն ի վեր ոստուցեալ զնոսա ընկենոյր յերկրէ. եւ այսպէս կթեալ ոտիւք եւ կարկեալ խաւսիւք՝ լինէին խորտակեալք ամենեքեան: 17 Իսկ զերանելի Խուժիկն աջ հզաւրին պահէր անհոգս. ուրախալից մտաւք փառաւորեր զԱստուած, իմացեալ այնուհետեւ, թէ արդ հաստատ կատարին բազմաժամանակեայ յամենայն կամաց իւրոց խնդիրք: 18 Եւ կատարեալ միապէս երկիւղիւ զգիշերն ողջոյն եւ զտիւն բովանդակ եւ զերկրորդ եւս գիշերն մինչեւ ի ժամ արեգականն ծագման՝ եւ ապա լռէին ձայնք անդնդոցն հնչմանց, եւ որոտմունք ամպոցն փարատեալ ցածնուին, եւ դադարէր երկիրն ի շարժելոյ, եւ ցայտմունք փայլատակմանցն ամփոփէին յերեւելոյ. եւ լինէր այս լոկ շուրջ զտեղեան իբրեւ ասպարիսաւք երկուք: 19 Իսկ պահապանքն յահագին ապշութենէ թմրութեանն սակաւիկ մի ոգի առեալ՝ աչս ածէին փախչելոյ ի տեղւոջէն. այլ ի յոյժ բեկմանէ սրտիցն երկիւղէ՝ ոչ կարէին կանգնել ի յերկրէն⁶. լոկ հայէին եւեթ ընդ միմեանց դէմ, եւ խաւսել ինչ ոչ կարէին:

1 Ձ. ի խորածորս

2 ՏՏ. եկեալք (չիք ոք)... գտանիցեն... սփռիցեն

3 ԲԳՄ. վեհոնշապիոյ

4 Ձ. անդրզապետի

5 ՏՏ. երանելին յայնպիսի

6 Կամ ըստ Ձ. յերկրէն